Հետազոտական

աշխատանք

Տիտղոսաթերթ

Կազմակերպության տվյալներ • Անվանում, հասցե • Տնօրեն • Էլ.հասցե • Հեռախոս	«Մասնակցային դպրոց» կրթական հիմնադրամ Վահրամ Սողոմոնյան masnakcayindproc@gmail.com
Հետազոտության թեմա/վերնագիր • Հետազոտության թեմա	Երկխոսությունների դերը օտար լեզվի դասավանդման գործընթացում
Ուսուցչի տվյալներ • Ա.Ա.Հ. • Մասնագիտություն • Հեռախոս • էլ. հասցե • Դասավանդվող առարկաներ	Գայանե Առաքելյան Ռաֆիկի Մանկավարժ Գերմաներեն

• Դասարաններ	3բ, 3գ ,4ա ,5բ ,5դ ,6ա ,7բ ,8ա
Ուսումնական հաստատության տվյալներ • Անվանումը, հասցե • Հեռախոս • Էլ. հասցե (տնօրենության) • Web կայքի հասցե	Վ. Տերյանի անվան թիվ 60 հիմնական դպրոց Տիգրան Մեծ 42 010 55 00 70 Teryan60@mail.ru Yerevan60.schools:te.am

Բովանդակություն

Ներածություն

Նպատակը եվ հետազոտական հարցը

Թեմայի կարեվորությունը եվ նշանակությունը թիրախային խմբի համար

Հետազոտության մեթոդները

Տվյալների վերլուծություն

Գրականության ցանկ

Հավելված

Ներածություն

Դաստիարակության արվեստը իր մեջ կրում է ամենից առաջ խոսելու, մարդկային սրտին դիմելու արվեստ:

Վ.Սուխոմլինսկի

Կրթական համակարգի նորացումը, ուսուցման որակի և արդյունավետության բարձրացումը ենթադրում է կառուցվածքային և բովանդակային փոփոխություններ ըստ ժամանակակից պահանջների:

Լեզուների ուսուցման բնագավառում կարևորվում է բազմալեզու կրթությունը: Մի քանի օտար լեզուների իմացությունը հնարավորություն է ընձեռում անհատին արդյունավետ ինտեգրվելու հասարակության մեջ, ծանոթանալ համաշխարհային գիտական , հասարակական, մշակութային, տնտեսական նորություններին և օգտվել դրանցից: Օտար լեզվով շփումը մշակում է անհատի վարքը, նպաստում է աշխարհայացքի և համոզմունքի ձևավորմանը, խոսքային կարողությունների զարգացմանը : Այդ պատճառով օտար լեզվի ուսուցման կարևորագույն մասն է կազմում բանավոր խոսքի ուսուցումը, որը իրականացվում է մտքերը բանավոր արտահայտելու, ունկնդրելու, ընթերցելու գրելու միջոցով: Կենդանի խոսքի շնորհիվ է , որ կատարվում է հաղորդակցումը: Մտածողության պրոցեսը տեղի է ունենում ներքին խոսքի միջոցով, որը և դառնում է արտաքին խոսքի անհրաժեշտ նախապայմանը:

Համապատասխանաբար տարբերում ենք խոսքային գործունեության հետևյալ տեսակները՝ ռեցեպտիվ (ունկնդրել, ընթերցել) և ռեպրոդուկտիվ (խոսել, գրել) , որոնք սերտ փոխհարաբերության մեջ են գտնվում միմյանց հետ: Բանավոր խոսքը ենթադրում է երկու մասնակից՝ խոսող և ունկնդրող: Եթե մասնակիցներից մեկը անընդհատ ակտիվ դերում է՝ խոսում է, իսկ մյուսը ունկնդրում է ապա մենք գործ ունենք մենախոսության հետ: Իսկ եթե երկու մասնակիցները հերթով մտքեր են փոխանակում կոնկրետ թեմայի շուրջ, ապա մենք գործ ունենք երկխոսության հետ:

Ինչպես գիտենք բանավոր խոսքի ձևավորումը սկսվում է լեզվական նյութի ներմուծմամբ և կիրառման հմտությունների ձևավորմամբ : Սա ուսուցման

սկզբնական աստիճանն է, այսինքն նախապատրաստական: Հիմնական խնդրի լուծմանը մենք հասնում ենք աստիճանաբար, երբ աշակերտները տիրապետում են բառերի որոշակի քանակի, որը նրանց հնարավորություն է տալիս ասել ոչ միայն առանձին բառեր, նախադասություններ, այլ կառուցել խոսքի հատվածներ: Վերջինիս համար անհրաժեշտ է նաև իմանալ խոսքային նմուշներ , որոնք օգնում են կապակցված խոսք կազմելուն: Եթե ուսուցման սկզբնական շրջանում բանավոր խոսքի զարգացումը որևէ ստեղծագործական աշխատանք չի պահանջում, ապա հետագայում աշակերտից պահանջվում է մտածողական մեծ ակտիվություն: Աշակերտը օգտվելով յուրացված լեզվական միջոցներից տրված առաջադրանքի համար տարբեր լուծումներ է գտնում , որը նպաստում է մտավոր զարգացմանը:

Բանավոր խոսքի էությունը կայանում է նրանում, որ այն հոգեբանական բարդ պրոցես է և ունի երկու կողմ՝ ունկնդրել (ռեցեպտիվ) և խոսել (ռեպրոդուկտիվ) : Խոսելը բնորոշվում է եռաստիճան կառուցվածքով.

1. Դրդապատճառային (մոտիվացիա)
2. Վերլուծահամադրական
3. Կատարողական

Դրդապատճառային փուլը իրագործվում է դրդապատճառի, պահանջմունքի և գործողության նպատակի փոխներգործությամբ, որի հիմնական խթանը պահանջմունքն է: Խոսքային գործեության մեջ դրդապատճառը հենվում է ինչ – որ բան ասելու պահանջմունքի և հաղորդակցական մտադրության վրա:

Վերլուծահամադրական գործունեության միջոցով հաղորդակցվելու պահանջմունքը գտնում է իր կոնկրետ լեզվական բավարարումը: Խոսքի վերլուծահամադրական կողմն ընդգրկում է արտահայտության ձևավորման մեխանիզմ՝ բառային միավորների և քերականական կառուցվածքների կիրառում և տարբեր տիպի փոխակերպումների կատարում:

Խոսքի կատարողական աստիճանն ունի արտաքին բնույթ և իրագործվում է արտահայտության արտաբերման միջոցով:

Երկխոսություն վարելու համար կարևոր է իմանալ որոշակի բառապաշար

այդ պատճառով ցանկանում պարզել. **որքանո՞վ է արդյունավետ երկխոսության կիրառումը օտար լեզվի բառապաշարի հարստացման գործընթացում:**	
Թեմայի կարեւորությունը եւ նշանակությունը Ձեր/թիրախային խմբի համար	Օտար լեզու սովորրելու հիմնական նպատակները կարողանալ կարդալ , գրել, խոսել և լսածը հասկանալն է : 3 – րդ և 4 – րդ դասարաններում աշակերտը տառաճանաչության ,պարզ բառերի ճիշտ գրության և արտասանության հետ զուգահեռ պիտի կարողանա հաղորդակցվել պարզագույն նախադասություններով, նկարագրել պարզ իրեր: Այս գործընթացի ժամանակ երկխոսությունը նույնպես կարող է օգնել աշակերտին պարզագույն բառերով հաղորդակցվել իր դասընկերների հետ:
Ո՞ր առանցքային կոմպետենցիային/կարող ունակությանն է ուղղված նպատակի ուսումնասիրությունը	Լեզվական գրագիտություն և կարողունակություն Սովորել սովորելու կարողունակություն Ինքնաճանաչողական և սոցիլական կարողունակություն Մասամբ մշակութային և ժողովրդավարական կարողունակություն
Վերապատրաստման ո՞ր թեմայի շրջանակում է անդրադարձ կատարվել այս հիմնախնդրին/ ոլորտին	Կարողունակություններին անդրադարձ կատարվել է. Հանրակրթական բնագավառի օրենսդրություն, առարկայի դասավանդման մեթոդիկա, դիրքորոշում և արժեք փուլերում:

Խոսելը որպես խոսքային գործունեության տեսակ ունի իր միջոցները և իրականացման եղանակները: Խոսքը լեզվի միջոցով մտքի ձևավորման և ձևակերպման միջոց է: Խոսքային գործունեության կառուցվածքը բաղկացած է հետևյալ փուլերից.

1. Խոսքային գործունեության պլանավորում
2. Խոսքային գործունեության իրականացում
3. Համադրում և ստուգում

Խոսելու ընթացքում առանձնացվում են հետևյալ փուլերը.

1. Խոսքային մտադրության ձևավորում
2. Ներքին ծրագրավորում
3. Արտահայտության քերականական և բառային ձևավորում
4. Արտահայտության արտաբերում

Խոսքային մտադրության ձևավորումը անմիջականորեն կապված է ուսուցչի առաջադրած խոսքային իրադրության հետ: Առկա է անձի խոսելու պահանջմունքը և որոշակի նպատակ: Այս փուլում կատարվող վարժությունները պետք է ապահովեն խոսելու դրդապատճառ:

Ներքին ծրագրավորում կամ խոսքային գործողության իրականացումը ենթադրում է արտահայտության ծրագրավորման և կառուցման խտացված գործողություններ, որոնք իրագործվում են լեզվի միջոցով մտքի ձևավորման պրոցեսում: Այսինքն այն ապահովում է սովորողների բառային, քերականական և այլ հմտությունների ձևավորում , առանց որի հնարավոր չէ արտահայտության բառային և քերականական ճիշտ ձևավորումը:

Արտահայտության արտաբերումը խոսքի արդյունք է , որն իրականացվում է խոսքային գործողությունների միջոցով:

Ըստ մտածողության և հիշողության մասնակցության աստիճանի տարբերվում են խոսքի հետևյալ տեսակները.

- Նախաձեռնող խոսք:
- Արձագանքող խոսք:
- Ընդօրինակող խոսք:
- Ոչ գիտակցաբար վերարտադրվող խոսք:

Այսպիսով խոսքը կարող է ունենալ բարդության տարբեր աստիճաններ, պարզ բացականչությունից մինչև ինքնուրույն ծավալուն արտահայտություն: Խոսքի հոգեբանական յուրահատկությունները հաշվի առնելը մեծ նշանակություն ունի օտար լեզվի ուսուցման ընթացքում, որովհետև խոսքի իրականացումը ենթադրում է արտահայտության արտաքին և ներքին ձևավորման հմտությունների բարդ ամբողջություն, որը կարող է զարգանալ հաղորդակցման պահանջմունքի բավարարման անհրաժեշտությամբ պայմանավորված խոսքային գործողությունների կատարմամբ:

Երկխոսության բովանդակությունը նրա մասնակիցների արտահայտած միտքն է , իսկ վերջնական արդյունքը՝ երկխոսական տեքստը : Երկխոսության հիմնական հատկանիշները հետևյալներն են ՝ իրադրության համապատասխանելը, կառուցման ճշտությունը, կառուցվածքայնությունը և տրամաբանությունը: Այսպես է ներկայացնում **Մ. Գ. Աստվածատրյանը** « Օտար լեզուների դասավանդման մեթոդիկա » գրքում :

Երկխոսությունը տեղի է ունենում երկու կամ ավելի մասնակիցների միջև, որը հնարավոր չի լինի նախապես ծրագրավորել , քանի որ երկխոսություն վարողների խոսքային վարքագիծը կարող է լինել տարբեր: Այսպես գրում է **Ս. Ֆ. Շատիլովը** « Գերմաներեն լեզվի ուսուցման մեթոդիկա » գրքում :

Իհարկե այս երկու տեսակետները ճիշտ բնորոշում են երկխոսությունը , սակայն իմ ընտրած տարիքային խմբի համար երկխոսությունը ինչ որ իմաստով ծրագրավորվում է, քանի որ աշակերտները նոր են սկսում սովորել օտար լեզուն և փորձում ենք միաժամանակ սովորել բառեր նաև երկխոսությունների միջոցով:

Երկխոսության նպատակն է աշակերտներին սովորեցնել կոնկրետ իրադրության շուրջ զրույց վարել: Երկխոսության ժամանակ կարող են օգտագործվել նաև հաստատող կամ ժխտող բառեր: Աշակերտի մոտ պետք է աստիճանաբար ձևավորել նաև երկխոսության

տրամաբանությունը: Աշակերտը պետք է իմանա երկխոսության թեմային համապատասխան բառապաշար, հաստատող և ժխտող բառեր , բառային արտահայտություններ, տիրապետի հարց կազմելու կառուցվածքին: Շատ կարևոր է նաև հարցական նախադասության ինտոնացիան: Եթե հարցը համապատասխան ինտոնացիայով չի հնչում, ապա աշակերտը չի հասկանա , որ իրեն հարց են տվել: Պատահում է այնպես , որ աշակերտը չհասկանալով որ իրեն հարց են տվել չի կողմնորոշվում թե ի՞նչ պետք է անի և զարմացած այս ու այն կողմ է նայում :

Երկխոսություն վարել սկսում ենք պարզագույն արտահայտություններից: Առաջին անգամ դասարան մտնելիս ուսուցիչը ներկայանում է . Իմ անունը... է : Հետո մի աշակերտի հարցնում է:

Ի՞նչ է քո անունը: Իհարկե ոչ բոլոր աշակերտներն են հասկանում օտար լեզվով առաջին անգամ լսած հարցը, բայց հարցական ինտոնացիան, մի քանի անգամ ներկայանալը, հարցը կրկնելը, նաև ձեռքով , ժեստերով ցույց տալը օգնում են աշակերտին հասկանալ ի՞նչ է լսել և սկսում է կարճ պատասխանել , ասել իր անունը:

Աշխատանքը սկսելուց առաջ աշակերտները հանձնարարություն են ստացել անանուն թերթիկների վրա գրել թե ի՞նչ կուզենային անել գերմաներեն լեզվի դասաժամին: Երեխաների մեծամասնությունը ցանկանում է սովորել գերմաներեն երգեր և պարեր , քանի որ սովորել են այդպիսի մի երգ, որի ժամանակ պարային շարժումներ են կատարում: Աշակերտների մի մասը ցանկանում է գրել , կարդալ և խոսել սովորել: Կոնկրետ երկխոսություն վարել քչերն են ցանկացել, մոտավորապես 18-20 %: Քանի որ երկխոսության ձևավորման հիմքը ուսուցչի զրույցն է աշակերտի հետ, մի քանի դաս հարց ու պատասխան վարժություններից հետո աշակերտները սկսեցին հաճույքով երկխոսություններ վարել: Նոր Հարց լսելիս աշակերտը լարվում է, փորձում կռահել, ի՞նչի մասին է խեսքը: Սա նույնպես խթան է հանդիսանում լսածը հասկանալու նպատակով սովորել որոշ բառեր:

Երկխոսությունը կարծես թե լեզվական հաղորդակցության բնական պահանջ է, շարունակական երևույթ, իրար հաջորդող գործողությունների շարք . լսել , մտածել , խոսել և այսպես շարումակ: Երկխոսության ժամանակ կարևոր

գործոն է մտածելը, հարցին ճիշտ պատասխանելու և երկխոսությունը քաղաքակիրթ ձևով վարելու համար:

Ռուս լեզվաբան **Լ. Պ. Յակուբինսկին** ասում է . « Երկխոսությունը ոչ միայն խոսքի ձև է , այն նաև մարդու վարքագծի բազմազանություն է »: Որպես այլ մարդկանց հետ բանավոր հաղորդակցման ձև, երկխոսությունը պահանջում է , որ աշակերտը ունենա որոշակի սոցիալական և խոսքային հմտություններ, որոնց զարգացումը տեղի է ունենում աստիճանաբար: Երկխոսությունը բնութագրվում է խոսքի համեմատաբար արագ փոխանակմամբ , երբ փոխանակման յուրաքանչյուր բաղադրիչ կրկնօրինակ է , և մի կրկնօրինակը խիստ պայմանավորված է մյուսով:
Փոխանակումը տեղի է ունենում առանց որևէ նախնական քննարկման:

Երկխոսության համար կարևոր է աշակերտի խոսելու կարողությունը զարգացնել, սովորեցնել բառապաշար , սովորեցնել նախադասությունը ճիշտ կազմել, ընտրել համապատասխան բառը: Պետք է աշակերտին տրամաբանել սովորեցնել: Խոսքի զարգացման նպատակը տեքստ կազմելու ունակությունն է: Աշակերտը պետք է կարողանա արտահայտել իր սեփական միտքը: Խոսքը զարգացնելու համար պետք է հարստացնել բառապաշարը, սովորեցնել բառային արտահայտություններ: Աշակերտը պետք է սովորի ճիշտ նախադասություն կազմել (հատկապես գերմաներեն լեզվում պետք է ուշադիր լինել ստորոգյալի տեղին):

Շատ կարևոր է որ աշակերտը երկխոսության ժամանակ իրեն զգա այն պայմաններում, ինչ ներկայացնում է, այսինքն դերի մեջ մտնի: Դերի մեջ գտնվող աշակերտը կարողանում է տրամաբանական զարգացում տալ երկխոսությանը, փորձում է նոր բառեր սովորել, իր խոսքը իր ուզած ուղղությամբ տանելու նպատակով: Շատ կարևոր է նաև սովորեցնել աշակերտին լսել զրուցակցին և չխանգարել , ձևավորել ընկերոջը հարգելու վարքագիծ:

Հետազոտության համար ընտրել եմ երկու երրորդ և մեկ չերրորդ դասարան: Անանուն անկետավորում անցկացնելուց հետո ընթերցել եմ աշակերտների ցանկությունները դասարանի բոլոր անդամների համար: Փորձել ենք համատեղ վերլուծել : Կազմակերպել եմ հարցազրույց

աշակերտների հետ որից հետո բացատրել աշակերտներին , որ մեր զրույցը երկխոսություն է :

Ինչպես փոքրիկ երեխան նմանակելով մեծերին սկսում է կրկնել լսածը և խոսել , այդպես 3 – րդ դասարանի շատ աշակերտներ փորձում են նմանակել ուսուցչին և սովորել լսածը: Առաջին դասաժամին սովորում են

Ի՞նչ է քո անունը : Wie heißt du ?

Դու ո՞վ ես: Wer bist du ?

Մի քանի անգամ կրկնելով հարցը աշակերտներին կրկնել եմ տալիս լսածը, որից հետո պատասխանը սովորելու և հարցը հասկանալու նպատակով մատնանշում եմ ինձ և ասում իմ անունը: Ընդունակ աշակերտները անմիջապես հասկանում են հարցը և կարողանում են պատասխանել, մյուսները աստիճանաբար սովորում են: Այնուհետև սովորում ենք պատասխանել ճիշտ այն հարցին, ինչ լսել ենք: Սովորածը ամրապնդում ենք միմյանց հարցեր տալով, սկզբում հերթով, ապա զույգերով : Մեր խաղը շարունակում ենք խմբերով, որից հետո փորձում ենք ձնագնդիկի մեթոդը, յուրաքանչյուր աշակերտ կրկնում է ընկերոջ ասած բառը ավելացնում հաջորդ բառը: Նոր սովորած հարց ու պատասխանները լավ ամրապնդելու նպատակով նետում ենք գնդակը և տալիս հարցը: Աշակերտը բռնում է իրեն նետված գնդակը և պատասխանում հարցին: 3 – րդ դասարաններում արդեն սովորել ենք .

Wie heißt du ?	Ի՞նչ է քո անունը:
Wer bist du ?	Դու ո՞վ ես:
Wie alt bist du ?	Դու քանի՞ տարեկան ես:
Wo Wohnst du ?	Դու որտե՞ղ ես ապրում:
Wie geht's ?	Ինչպե՞ս ես:

Այս հարցերին պատասխանելու համար սովորել ենք թվերը 1 – 10 և երգ, որտեղ միաժամանակ սովորել ենք ողջունել միմյանց , հրաժեշտ տալ և ինչպե՞ս ես հարցի պատասխանը: Երգը կա YouTube - ում Guten Tag ! Hallo ! Wie geht's: Աշակերտները մեծ ոգևորությամբ հարցազրույցներ են վարում միմյանց հետ և ցանկություն ունեն նոր հարցեր սովորել: Այսպես աշակերտները ոգևորվում են և ցանկանում նոր բառեր սովորել, նոր

հարցեր տալու նպատակով:

Ուսումնառության այս կարճ ժամանակահատվածի համար ՈՒԴԱԿ - ուսումնառության դիտարկված արդյունքների կառուցվածքում երկխոսություններում ունենք առաջին երեք մակարդակները. չկապակցված, միակապ և որոշ չափով բազմակապ:

4 – րդ դասարանում մեր հարցերը բնականաբար ավելին են: Նախորդ հարցերին ավելացել են .

Was machst du gern ?

Was isst du gern ?

Was trinkst du gern ?

Wie heißt deine Mutter ?

Wie heißt dein Vater ?

Wie ist dein Name ?

Spielst du gern Ball ?

Այս դասարանում բացի բառապաշարից աշակերտը սովորում է հարցական նախադասությունների կազմությունը: Քանի որ աշակերտները կարդալ գիտեն, երրորդ դասարանում արվող խաղերին ավելանում է հարց և պատասխան ընտրությունը: Աշակերտների կեսը վերցնում է կարմիր գույնի թերթիկը՝ հարցը, մյուս կեսը կանաչ թերթիկը՝ պատասխանը: Կարմիր գույնի թերթիկ ունեցող աշակերտները հերթով կարդում են հարցերը, կանաչ թերթիկները լսելով իրենց պատասխանին համապատասխան հարցը մոտենում են համապատասխան հարց ունեցող աշակերտին: Երբ բոլոր պատասխանները արդեն զույգ են կազմում, ստուգում ենք:

4 – րդ դասարանում սկսել ենք սովորել նոր երգ, որը հարց և պատասխանի ձևով է ընթանում:

- Wer kennt ein Wort mit Ba?
- Ich kenne einen Badesee,
  dort baden wir hurra!

Աշակերտներից մեկը երգում է . ո՞վ գիտի բառ ... տառով : Մի աշակերտ երգելով պատասխանում է. ես գիտեմ բառ ... տառով և ասում է այդ բառը : Ամբողջ դասարանը միասին կրկնում է երգի պատասխան մասը:

Նմանատիպ երգերը և խաղերը կարծես թե ավելի են ոգևորում աշակերտին և նա հաճույքով է սովորում:

Դերային երկխոսությունները նույնպես ոգևորում են աշակերտներին: Եթե դիտարկենք **Լ.Ասատրյանի** և **Գ. Հակոբյանի** «Մանկավարժական հետազոտությունների մեթոդաբանություն » գրքում նկարագրված եռաչափ սանդղակի դերային երկխոսություններ վարելիս աշակերտները մեծամասամբ շատ ակտիվ են , քչերը՝ ակտիվ, պասիվ աշակերտներ չունենք:

Հետադարձ կապը իրականացնում եմ աշակերտների միջոցով: Լավ սովորող աշակերտը վարում է երկխոսությունը : Սա խթան է հանդիսանում, մյուս աշակերտները ոգևորվում են, փորձում լավ սովորել, որ իրենք նույնպես վարեն երկխոսություններ:

Պարագրաֆներ/մասեր (10-15 էջ)

Գրականության ակնարկ ● Մեջբերումներ արդեն արված հետազոտություններից, ● Մեջբերումներ գրականությունից, տեղեկության վստահելի աղբյուրներից: **Պարտադիր է կատարել հղում աղբյուրին**	« Երկխոսության բովանդակությունը նրա մասնակիցների արտահայտած միտքն է, իսկ վերջնական արդյունքը՝ երկխոսական տեքստը: Երկխոսության հիմնական հատկանիշները հետևյալներն են՝ իրադրության համապատասխանելը, կառուցման ճշտությունը, կառուցվածքայնությունը և տրամաբանությունը » Աստվածատրյան Մ. Գ. Օտար լեզուների դասավանդման մեթոդիկա « Երկխոսությունը տեղի է ունենում երկու կամ ավելի մասնակիցների միջև, որը հնարավոր չի լինի նախապես ծրագրավորել, քանի որ երկխոսություն վարողների խոսքային վարքագիծը կարող է լինել տարբեր » Ծատիլով Ս. Ֆ. Գերմաներեն լեզվի դասավանդման մեթոդիկա
Օգտագործված մեթոդները, գործիքները	Անկետավորում Վերլուծություն Հարցազրույց Ջնագնդիկի մեթոդ Աշխատանք զույգերով, խմբերով Դերային խաղեր
Իրականացման ժամանակահատվածը	05.09.2022 – 23.09.2022

Թիրախ խումբը և շրջանակը /քանակ, սեռային բաշխում/	3- րդ. դասարան 27 աշակերտ 14 աղջիկ , 13 տղա 4 – րդ դասարան 14 աշակերտ 7 աղջիկ, 7 տղա

Եզրակացություններ, առաջարկություններ

Վերհանված արդյունքներ, եզրակացություններ, պատասխան հետազոտական հարցին	Այս աշխատանքի, ինչպես նաև ցանկացած այլ աշխատանքի ընթացքում եղել են բազմաթիվ անորոշ իրավիճակներ, դժվարություններ, սակայն աշակերտների ոգևորությունը ոգևորել է նաև ինձ: Աշակերտները ոգևորվում են հատկապես դերային խաղերից, տրված հարցին ճիշտ պատասխան ընտրելու մեթոդից: Աշխատանքների ընթացքում որոշակի բառապաշար սովորում են, իրար հետ օտար լեզվով շփվելուց ոգևորվում, ցանկանում են ավելի շատ հարցեր և պատասխաններ սովորել: Այս աշխատանքի ընթացքում ես համոզվեցի, որ աշակերտը՝ հատկապես տարրական դասարանի, խաղային մեթոդներով դասաժամերին ավելի մեծ ոգևորությամբ է սովորում:
Այլ տեղեկատվություն	

Օգտագործված գրականության ցանկ

1. Ասատրյան Լ. և Հակոբյան Գ. « Մանկավարժական հետազոտությունների մեթոդաբանություն » 2010

2. Աստվածատրյան Մ. Գ. « Օտար լեզուների դասավանդման մեթոդիկա» 1985

3. Շատիլով Ս. Ֆ. « Գերմաներեն լեզվի ուսուցման մեթոդիկա » 1977

Հավելվածներ

Հարցաթերթիկներ





https://photos.app.goo.gl/5ojsHVPqByMk1KWC9